ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
Գերմանական համագործակցություն DEUTSCHE ZUSAMMENARBEIT
Implemented by giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH
Schweizerische Eidgenossenschaft Confédération suisse Confederazione Svizzera Confederaziun svizra
Swiss Agency for Development and Cooperation SDC
USAID FROM THE AMERICAN PEOPLE

# ԶԵԿՈՒՅՑ

## Հայաստանի Հանրապետության 2017 թ. խոշորացվող համայնքների վերաբերյալ ձեռք բերված տեղեկությունների

# ԱԽՈՒՐՅԱՆ

## համայնք

**(Ախուրյան, Այգաբաց, Արևիկ, Բասեն, Կամո, Կառնուտ, Հովիտ, Ջրառատ բնակավայրեր)**

**Հեղինակ՝ Միեր Հակոբյան**

**Երևան – 2017**




# ԱԽՈՒՐՅԱՆ
## համայնքը՝ հպանցիկ

**Վարչական տարածքը՝** 19 687 հա

**Բնակչությունը՝** 17 635 մարդ

**Մարզը՝** Շիրակ

**Համայնքի կենտրոնը՝** Ախուրյան

**Բնակավայրերը՝** Ախուրյան, Այգաբաց, Արևիկ, Բասեն, Կամո, Կառնուտ, Հովիտ, Ջրառատ

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թ. հունիսի 9-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի համաձայն՝ Շիրակի մարզի Ախուրյան խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվում է 8 գյուղական բնակավայր՝ Ախուրյան (համայնքի կենտրոն), Այգաբաց, Արևիկ, Բասեն, Կամո, Կառնուտ, Հովիտ, Ջրառատ:

### Համայնքի ընդհանուր նկարագիրը

Համայնքի բնակավայրերը տեղակայված են ՀՀ Շիրակի մարզի կենտրոնական հատվածում և մոտ են գտնվում մարզկենտրոն Գյումրուն, ինչպես նաև Լոռու ու Արագածոտնի մարզերին: Բնակավայրերի գոտիականությունը լեռնային է. ծովի մակերևույթից բարձրությունն ըստ բնակավայրերի տատանվում է 1500-19000 մետրի սահմաններում: Համայնքի կենտրոն Ախուրյանը տեղակայված է 1544 մետր բարձրության վրա: Համայնքի ընդհանուր վարչական տարածքը խոշորացումից հետո կազմում է **19 687** հա: Տարածքով ամենամեծ բնակավայրը Ջրառատն է (3870 հա), ամենափոքրը՝ Արևիկը (1581 հա): Համայնքի կենտրոն Ալագյազն այս չափանիշով 3-րդն է (2702 հա):

### Բնակչությունը

Համայնքի ընդհանուր բնակչությունը 2017 թ. դրությամբ կազմում է **17 635** մարդ: Բնակչությամբ ամենամեծ բնակավայրը համայնքի կենտրոն Ախուրյանն է (9278 մարդ), իսկ ամենափոքրը՝ Հովիտը (525 մարդ): Համայնքում բնակչության խտությունը կազմում է 89.7 մարդ/կմ$^2$: Ամենախիտ բնակեցված բնակավայրը Ախուրյանն է (343.4 մարդ/կմ$^2$), ամենանոսրը՝ Ջրառատը (27.83 մարդ/կմ$^2$): Բնակավայրերի վարչական տարածքների ու բնակչության թվի վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1.** Ախուրյան խոշորացվող համայնքում ներառված բնակավայրերի վարչական տարածքն ու բնակչությունը

| № | Բնակավայրի անվանումը | Վարչական տարածքը (հա) | Հաշվառված բնակչությունը (2017 թ. դրությամբ) | Բնակչության խտություն (մարդ/կմ$^2$) |
|---|---|---|---|---|
| 1 | **Ախուրյան** | 2702 | **9278** | 343.38 |
| 2 | Արևիկ | 1581 | 1800 | 113.85 |
| 3 | Բասեն | 3681 | 1712 | 46.51 |
| 4 | Կամո | 2418 | 1476 | 61.04 |
| 5 | Ջրառատ | 3870 | 1077 | 27.83 |
| 6 | Կառնուտ | 1936 | 1005 | 51.91 |
| 7 | Այգաբաց | 1857 | 762 | 41.03 |
| 8 | Հովիտ | 1642 | 525 | 31.97 |
| | **Ընդամենը /միջինը/** | **19 687** | **17 635** | **89.69** |

**Քարտեզ 1.** Ախուրյան համայնքի բնակչության տեղաբաշխումն (մարդ)՝ ըստ բնակավայրերի



**Բնակավայրերի տեղաբաշխումն ու տրանսպորտային կապերը**

Ախուրյանը գտնվում է մյուս բնակավայրերից հյուսիս կամ արևելք: Համայնքի կենտրոնին ամենամոտ տեղակայված բնակավայրը Կառնուտն է (4.9 կմ), ամենահեռուն՝ Ջրառատը (13.2 կմ): Ախուրյանից բոլոր բնակավայրերի միջին հեռավորությունը 8.56 կմ է, հասնելու համար պահանջվող միջին ժամանակը՝ 14.29 րոպե:

Ներհամայնքային տրանսպորտ չկա ոչ մի բնակավայրում, սակայն բոլոր բնակավայրերից գործում են կանոնավոր (սովորաբար՝ յուրաքանչյուր ժամը մեկ) երթուղիներ դեպի Գյումրի, ինչը էապես հեշտացնում է տեղաշարժը համայնքում և դրանից դուրս:

Համայնքի տրանսպորտային կապերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2.** Ախուրյան համայնքի տրանսպորտային կապերը

| Բնակավայր | Ներքին ճանապարհների երկարությունը (կմ) | Հեռավորությունը համայնքի կենտրոնից (կմ) | Հասնելու համար պահանջվող ժամանակ (րոպե) | Հեռավորությունը մոտակա մայրուղուց |
|---|---|---|---|---|
| **Ախուրյան** | 55 | - | - | 3.8 |
| Այգաբաց | 5 | 9.6 | 22 | 10.6 |
| Արևիկ | 20 | 5.1 | 17 | 6.6 |
| Բասեն | 15 | 9.1 | 10 | 12.9 |
| Կամո | 3.5 | 9 | 18 | 3.6 |
| Կառնուտ | 10 | 4.9 | 7 | 8.7 |
| Հովիտ | 1.2 | 9 | 11 | 12.8 |
| Ջրառատ | 5 | 13.2 | 15 | 17 |
| **Միջինը** | **18.33** | **8.56** | **14.29** | **10.40** |

Բնակավայրերի մեծ մասում կենտրոնական ճանապարհներն ասֆալտապատ են և ընթացիկ նորոգման կարիք ունեն, իսկ մյուս ճանապարհները հողային են և հիմնանորոգման կարիք ունեն: Դեպի մոտակա մայրուղիներին կապող ճանապարհները հիմնականում ասֆալտապատ են և գտնվում են բավարար վիճակում: Միայն Կամոյի պարագայում է, որ այդ ճանապարհը հիմնանորոգման կարիք ունի. ցուրտ եղանակին երբեմն նույնիսկ անանցանելի է դառնում:

Ախուրյանի հեռավորությունը մարզկենտրոն Գյումրուց 6.2 կմ է:

**Խմելու ու ոռոգման ջրամատակարարումը և աղբահանությունը**

Համայնքի 8 բնակավայրերից հինգում ջրամատակարարումը կատարվում է ՏԻՄ-ի, երեքում՝ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից, իսկ մեկում՝ համատեղ: Բնակավայրերի մեծամասնությունում ջրամատակարարման ժամակարգը շուրջօրյա է, սակայն ամառային տապով պայմանավորված՝ հաճախ լինում են չնախատեսված ընդհատումներ: Ախուրյանում և Կամոյում խմելու ջրի ներքին ցանցերը գրեթե ամբողջությամբ արդիականացված են, և գտնվում են բավարար վիճակում: Կառնուտում խողովակաշարը հիմնանորոգման կարիք ունեն. վերջին նորոգումը կատարվել է

1990-ական թթ., և այժմ վթարային վիճակում են: Մնացած բնակավայրերում խողովակաշարերը վերջին տարիներին մասամբ արդիականացվել են և միայն մասնակի նորոգման կարիք ունեն:

Բնակավայրերում ջրամատակարարման վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են աղյուսակ 3-ում:

**Աղյուսակ 3.** Ախուրյան համայնքում խմելու ջրի մատակարարումը

| Բնակավայր | Ջրամատա-կարարման կառավարողը | Ջրամատա-կարարման ժամակարգը | Սակագինը (1 մ$^3$) | Խողովակաշարի տեխնիկական վիճակը |
|---|---|---|---|---|
| **Ախուրյան** | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | 182 դր. | բավարար |
| Այգաբաց | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | 160 դր. | մասնակի նորոգման կարիք |
| Արևիկ | ՏԻՄ[1] | շուրջօրյա | 1000-2000 դր. | մասնակի նորոգման կարիք |
| Բասեն | ՏԻՄ | 12 ժամ | անվճար | մասնակի նորոգման կարիք |
| Կամո | ՏԻՄ | շուրջօրյա | անվճար | բավարար |
| Կառնուտ | «Վեոլիա ջուր» ՓԲԸ / ՏԻՄ[2] | շուրջօրյա / անկանոն | 160 դր. / անվճար | հիմնանորոգման կարիք |
| Հովիտ | ՏԻՄ | շուրջօրյա[3] | անվճար | մասնակի նորոգման կարիք |
| Ջրառատ | ՏԻՄ | շուրջօրյա | անվճար | մասնակի նորոգման կարիք |

Բնակավայրերից երկուսում (Կառնուտ, Ջրառատ) ոռոգման համակարգեր չկան: Մնացած բնակավայրերում դրանք առկա են, սակայն հրատապ նորոգման կարիք ունեն: Արևիկում և Բասենում համակարգերը չեն գործում անբավարար ենթակառուցվածքների պատճառով: Հովիտում ոռոգման համակարգն առկա է, սակայն ոռոգում չի իրականացվում ջրի սակավության պատճառով: Այգաբացի և Կամոյի ոռոգման համակարգերը կառուցված են ԽՍՀՄ տարիներին և հիմնանորոգման կարիք ունեն. ջրի կորուստները գերազանցում են 50%-ը: Ախուրյանում ևս համակարգն արդիականացման կարիք ունի, սակայն ջրի կորուստները ավելի հազվադեպ են լինում, քան նախորդ երկու բնակավայրերում:

Ախուրյանում աղբահանությունը կատարվում է կենտրոնացված եղանակով՝ առնվազն երկու օրը մեկ անգամ: Ախուրյանում տեղադրված է 53 աղբաման և պլաստիկ շշերի 36 աղբաման: Շրջիկ աղբահանության համար գանձվող գումարը 500 դրամ է մեկ տնային տնտեսության հաշվով, իսկ ստանդարտ աղբահանությունը՝ 150 դրամ մեկ անձի հաշվով: Չորս բնակավայրերում (Այգաբաց, Բասեն, Կառնուտ, Ջրառատ) աղբահանությունն իրականացվում է անհատական եղանակով: Հովիտում այն կատարվում է կենտրոնացված

---

[1] Արևիկում նախատեսվում է մինչև ընթացիկ տարվա ավարտը ջրամատակարարման կառավարումը հանձնել «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ին: Այժմ սակագինը գանձվում է մեկ տնային տնտեսության հաշվով՝ կախված անձերի քանակից, սակայն արդեն տեղադրվում են ջրաչափեր, և շուտով գանձումը կկատարվի՝ ըստ ծախսված ջրի ծավալի:

[2] Կառնուտի խմելու ջրի ներքին ցանցի ½-ը կառավարվում է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից, ½-ը՝ ՏԻՄ-ի: Ըստ այդմ, տարբերվում են ջրամատակարարման ժամակարգը, իսկ ՏԻՄ-ի կողմից կառավարվող հատվածում սակագին սահմանված չէ:

[3] Հովիտում գործում է երկու ջրագիծ, որոնցից մեկով ջրամատակարարումն իրականացվում է անկանոն ժամակարգով:

եղանակով, սակայն հստակ հաճախականություն ֆիքսված չէ. կախված է դրա անհրաժեշտությունից: Մինչև ընթացիկ տարվա ավարտը բնակավայրում կտեղադրվի 20 աղբաման: Արևիկում և Կամոյում աղբահանությունն իրականացվում է համայնքապետարանի կողմից ամսական մեկ անգամ:

## Կրթական հաստատությունները

Համայնքում գործում է 19 կրթական հաստատություն, որոնցից 3-ը՝ հիմնական, 7-ը՝ միջնակարգ, 1-ը՝ ավագ, 1-ը՝ գեղարվեստի, 1-ը՝ մարզական դպրոցներ են, իսկ 6-ը՝ մանկապարտեզներ (աղյուսակ 4):

**Աղյուսակ 4.** Ախուրյան համայնքում առկա կրթական հաստատությունները

| Բնակավայր | Մանկապարտեզ (հաճախողների քանակ) | Հիմնական դպրոց (աշակերտների քանակ) | Միջնակարգ դպրոց (աշակերտների քանակ) | Ավագ դպրոց (աշակերտների քանակ) | Գեղարվեստի դպրոց (աշակերտների քանակ) | Մարզադպրոց (աշակերտների քանակ) |
|---|---|---|---|---|---|---|
| **Ախուրյան** | 1 (100) | 1 (376) | - | 1 (99) | 1 (122) | 1 (246) |
| | 1 (100) | 1 (338) | | | | |
| | 1 (60) | 1 (31) | | | | |
| Այգաբաց | 1 | - | 1 (95) | - | - | - |
| Արևիկ | 1 (45) | - | 1 (200) | - | - | - |
| Բասեն | 1 (60) | - | 1 (170) | - | - | - |
| Կամո | - | - | 1 (145) | - | - | - |
| Կառնուտ | - | - | 1 (139) | - | - | - |
| Հովիտ | - | - | 1 (55) | - | - | - |
| Ջրառատ | - | - | 1 (116) | - | - | - |
| **Ընդամենը** | **6** | **3** | **7** | **1** | **1** | **1** |

Ինչպես երևում է աղյուսակ 4-ից, համայնքի կրթական հաստատությունները կենտրոնացած են Ախուրյանում, որը «սնուցում» է մնացած բնակավայրերին, որտեղ առկա է մեկական միջնակարգ դպրոց: Ախուրյանի երկու մանկապարտեզները, ինչպես նաև Բասենի մանկապարտեզը գտնվում են բավարար վիճակում, իսկ Ախուրյանի երրորդ մանկապարտեզն ընթացիկ նորոգման կարիք ունի: Արևիկի մանկապարտեզը գործում է տնակային պայմաններում, սակայն այժմ ընթանում են նոր շենքի նախագծման աշխատանքներ: Այգաբացի մանկապարտեզը նոր է վերանորոգվել և շահագործման է հանձնվելու 2017 թ. սեպտեմբերի 1-ից, սակայն մանկապարտեզը դեռևս գույք չունի: Այն նախատեսված է 50 երեխայի համար: Կառնուտում, Հովիտում և Ջրառատում միջնակարգ դպրոցներին կից գործում են նախակրթարաններ, որտեղ հաճախում է համապատասխանաբար 15, 15 և 25 երեխա:

Աշակերտների թվով ամենամեծը Ախուրյանի երկու հիմնական դպրոցներն են (համապատասխանաբար 376 և 338 աշակերտ), ամենափոքրը՝ Ախուրյանի երրորդ հիմնական դպրոցը (31 աշակերտ): Բոլոր երեք հիմնական դպրոցները, ինչպես նաև գեղարվեստի դպրոցն ու մարզադպրոցն ունեն ընթացիկ նորոգման կարիք: Ախուրյանի ավագ դպրոցը գտնվում է բավարար վիճակում: Բասենի և Հովիտի միջնակարգ դպրոցները գտնվում են բավարար վիճակում, իսկ մնացած բնակավայրերի դպրոցներն ընթացիկ նորոգման կարիք ունեն:

**Առողջապահական հաստատությունները**

Համայնքի բոլոր բնակավայրերում գործում է մեկական բուժկետ, իսկ Ախուրյանում՝ նաև պոլիկլինիկա, երկու հիվանդանոց և երեք դեղատուն: Այգաբացի ու Բասենի բուժկետերը գտնվում են բավարար վիճակում: Կառնուտի և Հովիտի բուժկետերն ունեն ընթացիկ, իսկ Ախուրյանի, Արևիկի, Կամոյի ու Ջրառատի բուժկետերը՝ հիմնանորոգման կարիք: Ախուրյանի պոլիկլինիկան և հիվանդանոցներից մեկը (նախատեսված 15 հիվանդի համար) հիմնանորոգման կարիք ունեն, իսկ մյուս հիվանդանոցը (նախատեսված 27 հիվանդի համար) գտնվում է բավարար վիճակում:

**Մշակութային հաստատությունները**

Մշակույթի տներ գործում են միայն Ախուրյանում ու Այգաբացում (դահլիճները նախատեսված են համապատասխանաբար 250 և 300 մարդու համար), սակայն երկուսն էլ հիմնանորոգման կարիք ունեն: Մշակույթի տուն առկա է նաև Արևիկ բնակավայրում, սակայն այն չի շահագործվում անբավարար վիճակի պատճառով:

Համայնքի կրթական, առողջապահական ու մշակութային հաստատությունների տեղաբաշխումը ներկայացված է քարտեզ 2-ում:

**Քարտեզ 2.** Ախուրյան համայնքի կրթական, առողջապահական ու մշակութային հաստատությունների տեղաբաշխումը




Բուժկետ | Պոլիկլինիկա | Հիվանդանոց | Դեղատուն

Մանկապարտեզ | Հիմնական դպրոց | Միջնակարգ դպրոց | Ավագ դպրոց

(Գեղ)արվեստի դպրոց | Մարզադպրոց | Մշակույթի տուն

**Համայնքի հիմնական կարիքները**

Հետազոտության արդյունքում առանձնացվել են բնակավայրերում առավել հրատապ խնդիրները, որոնք նշվել են համայնքապետարանի ներկայացուցիչների կողմից: Հիմնախնդիրների մեծամասնությունն առաջնային է մի քանի բնակավայրերի համար, իսկ մի քանիսը հատուկ են տվյալ բնակավայրին: Ընդհանուր առաջնահերթություններն են.

- **մշակույթի տան վերանորոգումը/կառուցումը** (Ախուրյան, Այգաբաց, Արևիկ, Հովիտ, Ջրառատ),
- **ավտոճանապարհների վիճակի բարելավումը** (Ախուրյան, Արևիկ, Կամո),
- **ոռոգման համակարգի արդիականացումը** (Այգաբաց, Բասեն, Հովիտ),
- **մանկապարտեզի վերանորոգումը/կառուցումը** (Կամո, Կառնուտ, Ջրառատ),
- **դպրոցներում մարզադահլիճների կառուցումը** (Ախուրյան, Արևիկ, Կառնուտ),
- **համայնքային կենտրոնի կառուցումը** (Կամո, Կառնուտ),
- **գազաֆիկացումը** (Կառնուտ, Ջրառատ),

Հովիտում առաջնահերթություն է համարվում նաև համայնքապետարանի շենքի վերանորոգումը, իսկ Ախուրյանում՝ զբոսայգու կառուցումը. նախագիծն առկա է, սակայն կառուցումը հնարավոր չէ սկսել անբավարար ֆինանսական միջոցների պատճառով:

Սույն զեկույցը լույս է տեսնում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Հրատարակության մեջ առկա տեսակետների պատասխանատվությունը կրում են հեղինակները և չեն արտացոլում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, ՇԶՀԳ և ԱՄՆ ՄԶԳ-ի և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

**Հրապարակված է**

Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերության (ԳՄՀԸ) կողմից
Ընկերության գլխամասային գրասենյակներ՝
Բոնն և Էշբորն, Գերմանիա

**ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիր**
Բաղրամյան պող. 4/1, 0019, Երևան
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 (0) 10 58 05 39; 58 93 00
Ֆաքս՝ +374 (0) 10 58 92 70
Կայք՝ www.giz.de